

## ***ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ***

Խորհրդի նպատակը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում և համայնքներում երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելը և խթանելը, երիտասարդական քաղաքականության համակարգված, հասցեավորված ու նպատակային իրականացմանն աջակցելը, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելն է:

### ***Խորհրդի խնդիրներն ու գործառնություններն են՝***

1) մարզում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացումը, երիտասարդության հարցերին առնչվող պետական, մարզային և համայնքային մարմինների համագործակցության ապահովումը.

2) մարզում երիտասարդական քաղաքականության գնահատումն ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին (այսուհետ՝ մարզպետ) համապատասխան առաջարկություններ ներկայացնելը.

3) երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում մարզային և համայնքային ծրագրերի քննարկումը, դրանց ֆինանսավորման անհրաժեշտության, ծավալների ու ձևերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը և դրանք ներկայացնելը, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցության համար բարենպաստ մթնոլորտի ձևավորումը, երիտասարդական

կազմակերպությունների գործունեության ընդլայնման և խրախուսման նպատակով տարբեր կազմակերպական, ծրագրային, ենթակառուցվածքային և այլ խնդիրների հայտնաբերումը և մարզպետին համապատասխան առաջարկություններ ներկայացնելը.

4) երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, առողջապահական, բնապահպանական, իրավական և այլ խնդիրների քննարկումը և մարզպետին առաջարկություններ ներկայացնելը.

5) երիտասարդության (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների) հոգևոր և ֆիզիկական զարգացմանը, քաղաքացիական և ազգային գիտակցության բարձրացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ազգային հոգևոր-մշակութային ժառանգությանն ու համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելուն, ավանդական բարոյական արժեքների քարոզչությանն ուղղված հասարակական նախաձեռնություններին և ծրագրերին, շնորհալի անհատ ստեղծագործողներին և արվեստագետներին աջակցելու մեխանիզմների ապահովմանը նպաստելը.

6) մարզում կատարվող երիտասարդական աշխատանքները գնահատելու և խթանելու նպատակով մրցանակաբաշխություն կազմակերպելն ու անցկացնելը, տարվա ընթացքում երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի ոլորտում լուրջ ներդրում ունեցած երիտասարդներին կամ երիտասարդական կազմակերպություններին տարբեր կարգի պարգևների, մրցանակների և պատվոգրերի շնորհման ներկայացնելը մարզպետին: